ակն, այն դնում է 1554-ին[77]։ Յետոյ, Զախարիասիեւիչը բաւարարւում է բերելով Մինասովիչի կողմից մատնացոյց արուած թուականը, այն է՝ 1557[78], որ Լեխիցկին եւս ընդունում է[79]։ Օբերտինսկին, ընդհակառակն, մի ժամանակ այդ թուականը 1555 համարելուց[80] յետոյ, յաջորդաբար այն տեղափոխեց եւ նշեց 1549-ից յետոյ»[81]։

Պատմագիտութեան մէջ տիրող այս լիովին անստոյգ դրութիւնն ինքնին ուշադրաւ է այս հարցում, ուստի եւ, յամենայն դէպս, արհեստական են Պետրովիչի ճիգերը՝ ենթադրութիւններով 1551–1555 թթ. մի շրջան սահմանելու՝ Գրիգոր Վարագեցու առաջնորդական կեանքում, այն էլ յենուելով լոկ Յովհաննիսեանի առաջին յիշատակարանի անհաստատ տեղեկութեան վրայ։

77 Idem, «Rys dziejów ormia'nskich, s. 112.

78 F. Zacharyasiewicz, «Wiadomos'c' o Ormianach w Polsce», Lwo'w, 1842, s. 39. J. E. Minasovicius, «Tetrasticha vitas singulorum Archiepiscoporum Leopoliensium inclitæ Nationis Armenæ in Polonia brevi carmine designantia», Augustæ Masoviorum, 1762, ad an. 1557.

79 Cz. Lechicki, «Kos'cio'l Ormian'ski w Polsce», s. 41.

80 Z. Obertynski, «Na marginesie dieeezjalnego schematyzmu ormia'nskiego», *Sprawozdanie z Posiedzen Towarzystwa Naukowego*, Warszawa, t. XXVI, 1933, s. 212.

81 Idem, «Die florentiner Union der polnischen Armenier . . . », S. 36 – 38.